Կարգապահական գործ թիվ ԿԳ-16145

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 196-ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/129-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԷՄԻԼՅԱ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Երվանդ Վարոսյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարդարյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Էմիլյա Նազարյանին (արտոնագիր թիվ 1236) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 18.07.2016թ. տրամադրված տեղեկանքի փաստաբան Էմիլյա Նազարյանն ունի 130.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2014թ. մայիսից մինչև 2016թ. հունիս ժամանակահատվածի համար:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

26.07.2016թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 300-Ա/ԿԳ-16145 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Էմիլյա Նազարյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

01.08.2016թ.-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի հոկտեմբերի 13-ին, ժամը՝ 18:34-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Պատասխանողի կողմից որևէ բացատրություն չի ներկայացվել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Վարույթին կցված են ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2016թ. և 13.10.2016թ. տրամադրված տեղեկանքներն, առ այն, որ փաստաբան Էմիլյա Նազարյանն ունեցել է 130.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն, որն ամբողջությամբ վճարել է:

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պատասխանողի նկատմամբ նույնանման խախում կատարելու փաստով նախկինում կարգապահական վարույթ չի հարուցվել:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Էմիլյա Նազարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճել հետևյալ պատճառաբանությամբ.

Պալատի խորհրդի 20.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարներիի վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետի՝ «Առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման: Երկրորդ կամ հետագա ցանկացած անդամավճարը չվճարելու խախտման դեպքում՝ անկախ կարգապահական վարույթն հարուցելուց հետո պարտքի մարման հանգամանքից, կարգապահական վարույթն այդ հիմքով չի կարող կարճվել»:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.9. հոդվածի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. *ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 26.07.2016 թվականի 300-Ա/ԿԳ-16145 որոշմամբ փաստաբան Էմիլյա Նազարյանի*

(արտոնագիր թիվ 1236) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ Պալատի խորհրդի 20.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարներիի վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետի հիմքով:

2. *Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Էմիլյա Նազարյանին:*

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Երվանդ Վարոսյան